ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25 հուլիսի 2014թ.

գ. Ամասիա

ՈՐՈՇՈՒՄ 18- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ՝ /ԾԱԾԿԱԳԻՐ 08-010-0074-0141/ 0.099 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝

Ամասիա համայնքի ավագանին որոշում է

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի սեփականությունը համարվող բնակավայրի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից 0.099 հեկտար հողամասը/ հողամասի գտնվելու վայրը՝ գյուղ Ամասիա, 2-րդ փողոց հողամաս 5/3, կադաստրային ծածկագիրը՝ 08-010-0074-0141/, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,հասարակական կառուցապատման նպատակով, անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ««Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Ավագանու անդամներ՝

Դավթյան Արտեմ	կողմ
Հովսեփյան Հովսեփ	կողմ
Մանուկյան Արթուր	կողմ
Մկրտումյան Արթուր	կողմ
Սարգսյան Ալեքսան	կողմ
Քոչոյան Ալեքսան	կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

25 հուլիսի 2014 թվական
գ. Ամասիա